ՍԱՂՄՈՍ 100

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Կոչ բոլոր մարդկանց Աստծուն փառաբանելու <u>MT ներածություն</u> Գոհության Սաղմոս	Փառաբանության երգ ՏԻՐՈՋԸ՝ Իր ժողովրդի հանդեպ հավատարմության համար	ՏԻՐՈՋԸ փառաբանությամբ օրհներգելու կոչ՝ ուղղված բոլոր ազգերին	Փառաբանության երգ	Փառաբանելու հրավերք
100:1-3				
	100:1-3	100:1-2	100:1-2	100:1-2
		100:3	100:3	100:3
100:4-5				
	100:4-5	100:4	100:4	100:4
		100:5	100:5	100:5

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐԲՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց»)
ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության <u>ուղեցույց</u> մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

ՀԱՄԱՏԵՔՍՏԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. Այս կարճ Սաղմոսն ունի յոթ ՀՐԱՄԱՅԱԿԱՆ, որոնք ուղղված են ՅԱՀՎԵԻ ժողովրդին՝
1. աղաղակեցե՛ք, Սաղմ. 100:1 – BDB 929, KB 1206, *Hiphil* տես՝ Սաղմ. 47:1, 95:1,2
2. ծառայեցե՛ք, Սաղմ. 100:2 – BDB 712, KB 773, *Qal*, տես՝ Ելից 3:12, 4:23, 2 Օր. 6:13, 1 Թագ. 7:3, 1 Մնաց. 28:9
3. եկե՛ք, Սաղմ. 100:2 – BDB 97, KB 112, *Qal*
4. ճանաչեցե՛ք (այսինքն՝ «երկրպագությամբ հաստատեք» իմաստով), Սաղմ. 100:3 – BDB 393, KB 390, *Qal*
5. մտե՛ք, Սաղմ. 100:4 – BDB 97, KB 112, *Qal*, տես՝ Սաղմ. 96:8
6. շնորհակալ եղե՛ք, Սաղմ. 100:4 – BDB 392, KB 389, *Hiphil*
7. օրհնեցե՛ք, Սաղմ. 100:4 – BDB 138, KB 159, *Piel*

Բ. Միակ ԲԱՅԸ (ՎԱՂԱԿԱՏԱՐ), որը ՀՐԱՄԱՅԱԿԱՆ չէ Սաղմոս 100:3բ-ում է, որը բնութագրում է ՅԱՀՎԵԻ կողմից Իսրայելի ընտրությունը և ազատագրումը (այսինքն՝ Ծննդ. 12:1-3, 15:12-21):
1. Նա է ստեղծել մեզ – Սաղմ. 95:6, 119:73

2. Իսրայելը Նրա հոտն է – Սաղմ. 23:1, 74:1, 95:7, Ես. 40:11, Երեմ. 31:10, Եզեկ. 34:31 (նաև Մեսիական մեջբերում է Եզեկ. 34:23, Միք. 5:4, Երեմիա 11, Հովհաննես 10:11, 14-16):

Գ. Սաղմոս 100:5-ում ԲԱՅԱԿԱՆ բառ չկա: Պետք է կիրառել «լինել» ԲԱՅԸ: Սաղմոս 100:3բ,գ և 5-ը նկարագրում են հենց ՅԱՀՎԵԻՆ և Նրա կողմից կատարած փրկագործությունը:

Դ. Որոշ գիտնականներ (այսինքն՝ UBS *Հեռնարկը*, NASB Սերտողության Աստվածաշունչը) հավատում են, որ այս Սաղմոսը «թագավորական Սաղմոսների» ամփոփիչ դոքսոլոգիան է (այսինքն՝ Սաղմոս 93, 95-99): «Թագավոր» տերմինը չի կիրառվում, սակայն Սաղմ. 100:3բ-գ հնարավոր է այդ է ակնարկում:

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 100:1-3
[1]Ցնծության աղաղակ բարձրացրե՛ք ՏԻՐՈՋԸ,
Դո՛ւք, բոլոր երկրներ:
[2]Ծառայեցե՛ք ՏԻՐՈՋՆ ուրախությամբ.
Նրա ներկայության առջև եկե՛ք երգելով:
[3]Ճանաչեցե՛ք, թե ՏԵՐՆ Ինքն է Աստված.
Ինքն է ստեղծել մեզ, և ոչ թե մենք ինքներս:
Մենք Նրա ժողովուրդը ու Նրա արոտի ոչխարներն ենք:

100:1 Սաղմոսերգուն պարբերաբար արտահայտում է Իսրայելի Աստծո ընդհանրական առանձնահատկությունը: Նա է միակ ճշմարիտ Աստվածը, արարիչը, պահապանը, փրկիչը (տես՝ Սաղմոս 33, 47, 98):

UBS *Հեռնարկը* (էջ՝ 852) առաջարկում է, որ այս արտահայտությունը՝ «ամբողջ երկիրը» պետք է հասկանալ Սաղմոս 100:2-3-ում յուրաքանչյուր բանաստեղծական տողի մեջ:

100:2 ՅԱՀՎԵՆ որպես միակ և ճշմարիտ Աստված (տես՝ <u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄԻԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ</u>)՝

1. ուրախությամբ ծառայեցե՛ք Նրան, տես՝ 2 Օրին. 12:11-12, 28:47
2. Նրա ներկայության առջև եկե՛ք երգելով, տես՝ Սաղմ. 66:1, 81:1, 95:2

Այս երկուսն էլ ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են (նաև Սաղմ. 100:4), որոնք նկատի ունեն տաճարի երկրպագությունը:

❖ **«ցնծության երգերով»** Այս ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԳՈՅԱԿԱՆԸ (BDB 943) վերաբերում է՝

1. ցնծության աղաղակին (այսինքն՝ NIDOTTE, հատոր 3, էջ՝ 1128)
2. «ուրախության ձայն», տես՝ Հոբ 3:7, 20:5, Սաղմ. 63:5

100:3 «ճանաչեցե՛ք» Եբրայերեն այս արմատն ունի ընդարձակ իմաստային դաշտ: Այստեղ արտահայտում է՝

1. տեղեկություն /մասին/
2. փոխհարաբերություն /հետ/

<u>ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱՉԵԼ</u>

❖ **«ՏԵՐՆ Ինքն է Աստված»** Սա ՅԱՀՎԵԻ բացառիկության մասին պարբերաբար կրկնվող թեմա է (տես՝ Ելից 8:10, 9:14, 2 Օր. 4:35, 39, 3 Թագ. 18:39, Սաղմ. 46:10): Կա միայն մեկ Աստված (տես՝ 2 Օրին. 6:4), սակայն կան այլ հոգևոր էակներ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԴԵՎԵՐԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀՐԵՇՏԱԿՆԵՐԻ ԵՐԿՆԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՍԱՏԱՆԱ

❖ **«Ինքն է ստեղծել մեզ»** Սա վերաբերում է Աբրահամին և նրա սերունդներին (տես՝ Համա-տեքստային Հասկացություններ, Բ) ուղղված կանչը և խոստումները:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՆԱՀԱՊԵՏՆԵՐԻՆ ՏՐՎԱԾ ՈՒԽՏԻ ԽՈՍՏՈՒՄՆԵՐԸ

❖
NASB, NKJV, NJB, LXX, Peshitta «և ոչ թե մենք ինքներս»
NRSV, TEV, JPSOA, REB, Vulgate «և մենք Իրենն ենք»

Առաջին տարբերակը (NASB) հետևում է MT (*Kethiv*): Երկրորդը՝ (NRSV) առաջարկ է, որն արվել է Մազորեթիկ գիտնականների կողմից, ովքեր հավաքագրել են MT (*Qere*): UBS Տեքստային Նախագիծը (էջ՝ 373) գնահատում է *Qere* "B" (որոշ չափով կասկածելի):

Խնդիրն այն է, թե արդյո՞ք «և ոչ թե» ՆԱԽԴԻՐ է «Նրա»-ի համար, թե ԿԱՊ և արդյո՞ք ժխտական է: Երկուսն էլ ճիշտ նույն կերպ են հնչում, երբ ընթերցվում է:

❖ **«Նրա ժողովուրդը և Նրա արոտի ոչխարները»** Սա նկարագրություն է ՅԱՀՎԵԻ հատուկ ուխտի ժողովրդի համար (տես՝ Սաղմ. 74:1, 79:13, 80:1, 95:7, 100:3):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 100:4-5
4Մտե՛ք Նրա դռներից գոհությամբ,
Ու Նրա սրահները՝ փառաբանությամբ.
Շնորհակալ եղեք Նրան և օրհնեցե՛ք Նրա անունը:
5Քանի որ ՏԵՐԸ բարի է.
Նրա ողորմությունը հավիտյան է.
Ու Նրա ճշմարտությունը՝ սերնդից սերունդ:

100:4 Ըստ երևույթին ակնարկվում է տաճարի երկրպագություն:

100:5 Ուշադրություն դարձրե՛ք, թե ինչպես է ՅԱՀՎԵՆ բնութագրվում (տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԻՍՐԱՅԵԼԻ ԱՍՏԾՈ ԲՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԳԾԵՐԸ (ՀԿ))

1. բարի, տես՝ Սաղմ. 106:1, 117:1, 118:1,29, Երեմ. 33:1
2. ողորմած, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԲԱՐԵԳԹՈՒԹՅՈՒՆ (*hesed*)
3. հավիտենական, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԻՏՅԱՆ (*o'lam*)
4. հավատարիմ, տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՀԱՎԱՏԱԼԸ, ՎՍՏԱՀԵԼԸ, ՀԱՎԱՏՔԸ ԵՎ ՀԱՎԱՏԱՐՄՈՒԹՅՈՒՆԸ ՀԿ-ՈՒՄ
5. բոլոր սերունդներին՝
   ա. Իսրայելը (հ. 3)
   բ. բոլոր մարդիկ, որ վստահում են նրան (հ. 1)

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Ո՞ւմ է ուղղված այս Սաղմոսը:
2. Ի՞նչ արարչագործություն է նկատի ունենում Սաղմ. 100:3բ:
3. Թվարկե՛ք և սահմանե՛ք Սաղմ. 100:5-ում առկա հիմնական աստվածաբանական բառերը: